



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18648

Հ Ե Մ Ե Ռ Օ Տ

Պ Ա Տ Ա Ս Ի Ռ Ա Ն Ի

Ջ Մ Ի Բ Ե Ի Ը Տ Պ Ռ Ե Ծ

Ե Գ Ծ

Ա Ն Ո Ւ Ն Ց Ե Ց Բ Ա Կ Ի Ն Մ Է Զ

Պ Ա Բ Ո Ւ Ե Լ Վ Ո Ւ Ե Ծ

Ս Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ Ո Ւ Ն Դ Է Մ

Մ. Վ Տ Ի Կ ա ռ Մ. Կ ա ռ Կ ա ռ Կ ա ռ



371.1

օր - 31

Զ Կ Ո Ս Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Ո Լ Ի Ս
Յ Ֆ Ի Ն Ճ Ա Ն Ճ Ը Լ Ա Ր

859

1747

1859

23147



1427

39

371.1
գր-31

Printed in Turkey

5

ՀԵՄԼԻՕՏ ՊԵՏԵՍԻՆԵՆԻ
ՕՂԻՒՌՆԻԸ ՏՊՈՒԸՅ
ԵՂԾ

2001

ԱՆՈՒՆ ՏԵՏՐԱԿԻՆ ՄԷՋ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԱԾ
ՍՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Որեւիցէ խնդիր մը որ քննութեան տակ կ'իյնայ, եւ մանաւանդ երբ վիճաբանութեան նիւթ կ'ըլլայ բոլոր հասարակութեան առջեւ. այն վիճաբանութեան ծագելիք օգտին վստահութեամբ սպասելու իրաւունքը կ'ունենայ բոլոր հասարակութիւնը. շատ նոր գաղափարներ կրնան ծնանիլ, նախապաշարմունքներ ցրուիլ, մտքեր լուսանորիլ, ճշմարտութիւններ յայտնուիլ, ստութիւններ, կեղծաւորութիւններ խայտառակուիլ: Եւայլն էւայլն: Բայց ցաւալի կ'ըլլայ այն վիճաբանութեան հետեւանքը, երբ իրաւունք էւ ճշմարտութիւն պաշտպանելու համար սկսին վիճակաբանութեան երկու կողմն ալ անձնական կիրքերու դիմել եւ անձնական պատուոյ դպչելիք անարգական ձեւերով վարուիլ: Որ կողմն որ այս տեսակ կիրքի մը ըսկզբնաւորութիւն կ'ընէ, յայտնի կ'ընէ իւր տկար ըլլալը, եւ ճշմարիտ էւ օրինաւոր փաստի կողմանէ պակասութիւն ունենալը. խոհական գլուխ մը կրնայ դատել մ ըսածս:

Այս բանիս մէկ օրինակն ալ մօտերս տե-

* Պ. Պալապան զիս շնորհակալութեան պարտուց ներքէն պիտի ձգէր, եթէ հաճէր Պօլսոյ Ամիրայից էւայլն խրկած *Եղծերուն* հետ իմ անունովս ալ *Եղծ* մը խրկէր, ինչպէս որ էս իրեն խրկեցի *Կէն*.

անք Իզմիր տպուած ԵՂՃ* անունով տետրակի մը մէջ, յորում Պ. Պալապանեան իւր անմեղութիւնը պաշտպանելու համար խնդրոյն սահմանէն կը խոտորի, եւ կ'ըսկսի իրեն համար օրինաւոր փաստ փնտռել Անդրեաս վարժապետին քեռորդոյն անձին դէմ յօդած անտէղի գրպարտութեանց մէջ: Պ. Պալապանին բոլոր գրածներուն ստութիւն ըլլալը ապացոյցանելու համար, հարկ կըմնայ ինձ ոչ թէ կենսագրութեան մէջ Ա. վարժապետին վերջին աղետալի դէպքին վերայօք պատմածներուն ճշմարտութիւնը (որոնք ճշմարիտ եւ խղճի մտօք զբրուած են), այլ անոնց ամենեւին հակառակութեան ոգով գրուած ջրլլալը հաստատելու համար պետք էղած բացատրութիւնը տալ Պ. Պալապանին տարակոյսը փարատելու մտօք, եւ Պ. Պալապանին յօդած գրպարտութիւնները էղծել, նախ՝ հանդարտ ոգով եւ խոհուն դատողութեամբ, որոնց ընդհակառակը 'ի գործ դրած կ'երեւի Պ. Պալապան իւր ԵՂՃ* մէջ, Երկրորդ՝ զգուշութիւն բանեցընով անձնական պատուոյ չհպչիլ. զի գիտէ Պ. Պալապան, թէ իւր վերայ բոլոր գիտցածներս յայտնելու ըլլամ, բոլորովին մերկ խայտառակ կ'ըլլայ աշխարհի առջեւ . . . եւ նոյն Երկիւղն ունի իւր սրտին մէջ, եւ անոր համար կանխաւ կը գուշակէ իմ ըսելիքներս իւր ԵՂՃ* մէջ (Երես 44, 45, 46, 47). Բայց ոչ, ես այդ վատութիւնը ջէմ խորհիր, եւ ոչ ալ կ'ուզեմ որ իմ սիրտս իւր սրտին համաձայն դատէ:

սողբութենէն մեկ օրինակ մը՝ վրան իւր անունը դրողմուած. Բայց ինչեւիցէ, վախցեր է որ շուտ ձեռքս կը հասնի, եւ շուտով իւր ստութիւնները կը խայտառակուին . . . ես իմ բարեկամիս մէկէն ստացայ միայն մեկ օրինակ:

Ճշմարտութիւնը սայրասուր պար մ'է, եւ Պ. Պա-
լապանեանի ու անոր խորհրդական քանի մը ար-
բանեակներուն պէս տեսակ մը Հայերու վերար-
կութն ներքէն ջճածկաւիբ:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Գիտնալ պէտք է որ Լոյճ¹ անցեալները առ-
Նմենապատիւ Արբազան Պատրիարք Հայր մեր
ուղղեալ բողոքոյ գրոյ մը անօգուտ և 'ի դե-
րև ելնելուն հետևանքն է : Բողոքոյ գրով կը
խնդրէին որ առաջարկուի ինձ յետս կոչումն
ընել Կենսագրութեան մէջ հրատարակուած ան-
հերքելի ճշմարտութիւնները, ապա թէ ոչ...
ընդունայի սպառնալիքներ... Լոյճ հանել կ'ըս-
պառնային : Տեսանք Լոյճը, Կալուստի գովուած
գրիչ մը յասպարէզ ելեր է երեսը ղիմակով՝
նորաթէք կարծուած գրչի մը դէմ : Ուրեմն կը
փութամք ուղղել հետևեալ երկու տողը առ
հեղինակն Լոյճ տետրակին :

Զի՞նչ պարծողդ այդ արժանի
այդքան պոռոտ բերցի գոջման.

ճրջեսցեն լերինք լերկունս

Եւ ծընցի մուկըն ծաղրալից:

(ՈՐԱՏԻՈՍ)

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Լոյճ տետրակին պատմական ոճը և ընթաց-
քը կը ցուցընէ որ Պ. Պալապան սրտին ան-
հնարին նեղութիւնէն, և ճշմարտութեան այն-
պէս մերկապարանոց յայտնուելուն վերայ շփո-
թած է, որով տետրակը տաղտկալի կրկնու-

Թիւններով , ճանճրացուցիչ ճամարտակու
Թիւններով և ունայն անճնազովու Թիւններով
լցուցեր է , զորս հերքելու համար կորսնցընե
լիք ժամանակս կը խնայեմ : Յառաջ բերուած
են չնչին փաստեր , անտեղի եզրակացու Թիւն
ներ՝ զուրկ խոհուն և հանդարտ ասացուածքէ :

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Պ. Պալապանին կեղծ փախուստը.

Վերջին դէպքին մէջ կամ վարժապետը և
կամ Պ . Պալապան՝ վարժապետին դէմ հակա
ուակու Թիւն ունեցող նոյն ժամանակի մէկ բա
նի հոգաբարձուներով մէկտեղ յանցաւոր պի
տի մնան . բայց Պ . Պալապան ինքզինքը ան
մեղ ցուցըցեր է , վարժապետն ալ անմեղ ,
հոգաբարձուաց ալ անմեղութեան մաս մը հա
ներ է . ո՞վ էր ուրեմն վերջին դէպքին այն
քան յուզման պատճառը . . . : Պ . Պալապան ճըշ
մարտութիւնը վարագուրել ուզեր է , և իւր
փաստերը վարժապետին բեռորդւոյն անտար
բեր կացութեան մէջ կը փնտռէ . . . — տխում
բութեան վերայ պէտք չէ ծիծաղել , այլ ցաւիլ :

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Պ. Պալապանին գրպարտութիւնը.

Կենսագրութեան մէջ ցուցըցեր եմ որ Պ .
Պալապան և իւր խորհրդական մէկ բանի հո
գաբարձուք եղեն պատճառ այն վերջին անդէ
տալի դէպքին , և Թէնոյն իսկ հոգաբարձուաց
մէջէն շատերը անոնց խորամանկութեան տեղ

եակ չէին և զօրծիր եղեր էին, տես Կենսագրութեան 26—27 երեսները : Բայց Պ. Պալապան, որպէս զի իւր գրուածքը ընդունելութիւն գտնէ Չմիւռնիոյ մէջ, յանդգներ է Չմիւռնացոյ դէմ գրուած մը սեպել Կենսագրութեան, և ինքնակոչ փաստաբան կենալ անոնց կողմանէ . բայց կը լսեմք որ Չմիւռնիա ըստ մեծի մասին ճշմարտութեան կուսակից, և Պ. Պալապանի բերնէն ելած . . . գովութիւններուն ունկնախից կ'ըլլայ, և կը պախարակէ անոր կեղծ ընթացքը . մեր ոգեկից բարեկամները* այսպէս կը հաստատեն, և տարակոյս չունինք . բայց կուզեմք Պ. Պալապանէն իմանալ ստոյգը, թէ իր իրեք շաբաթուան աշխատութիւնը այդքան նախատինք կրամ է :

ՅՕԴՈՒԱԾ Ե .

Պ. Պալապանին Ա. սուտը .

Պ. Պալապանին դէմ ոխ մ'ունենալու առիթ մը չեմ ունեցած երբէք : Բայց Պալապան այս բանս հաստատելու համար ելեր՝ իմ Մեսրոպեան վարժարանը դասատուութեան պաշ-

* Բարեկամիս մեկը կը հաստատէ թէ Եջե α ափ 'ի բերան ջմնալոյ համար ամջնալուն գրուած տղայական ստալոյ պատասխան մ'է » . մենք Պ. Պալապանին կը հարցնենք թէ ինքն ալ այնպէս կ'ընդունի՞ . Եւ թէ չեղա՞ն ճշմարտասեր մեկը, որ Եջե^հ հրատարակուելուն երկրորդ օրը էլնէր հրապարակար մե՞ծ շնորհակալութիւն տար Պ. Պալապանին, Եւ մե՞ծ գովութիւն Եջե տեսարակին . . . :

տօնը մտած ըլլալու ինքնաստեղծ պատմութիւն մը յառաջ կը բերէ : Ասի հերքենք ուրեմն այս պատմութիւնը , և ճիշդ եղելութիւնը յայտնենք :

1856 Փետրուարի վերջերը Պ. Կարապետ մօրեղծօրս հետ Օմիււնիա գացինք , և ուղղակի անոր տունն իջանք , զի Պ. Կ. մօրեղծայրս 'ի Օմիււնիա յատուկ պաշտօնով կը կենար , և առանձին տուն բռնած էր իրեն համար . յետոյ գացի 'ի տեսութիւն մեծիմաստ Անդրէաս մօրեղծօրս , որ զիս տեսնելով մեծ ուրախութիւն և մխիթարութիւն զգաց : Աոյն օրերը Մեսրոպեան դպրոցին Բ. սրահին քահանայ վարժապետները հրաժարուած ըլլալով , հոգաբարձուք անոնց տեղը արժանաւոր մէկը կը փնտուէին . երբ իմացան իմ դալս , Թախանձեցին Մ. վարժապետին , որ զիս համողէ դպրոց մտնելու . 'ի սկզբան մերժեցի , բայց յետոյ զիջայ Մ. վարժապետին Թախանձանայ՝ միայն Չամսոյ համար , մինչև արժանաւոր մէկը գտնելնին , որով մարտ 9՝ Բ. սրահին վարժապետ հըրատարակուեցայ : Մ. վարժապետ իմանալով որ ես Թուրքանութեան քիչ շատ տեղեկութիւն ունիմ , և Մ. լճէպրայի ալ մինչև Բ. հաւասարութեանց հասած եմ , վերի սրահին Թուրքանութեան դասերն ալ ինձի յանձնեց : Ուրեմն ոչ 'ի շնորհս մօրեղծօրս , ոչ 'ի շնորհս օրբութեան և ոչ Մ. լճէպրա դաս տալու համար մտած եմ Մեսրոպեան վարժարանը . յայտնուեցաւ Պ.

Պալատանին սուտը . հետևաբար Պ. Պալատանին դէմ ոխ պահելու առիթ չեմ ունեցած : Թող դարձեալ ճշմարտութիւն խօսելս վրէժխնդրութեան արդիւնք կարծէ Պ. Պալատան . . . :

ՅՕԴՈՒԱԾ Զ .

Պ. Պալատանին մե՛ծ զարմանքը .

Կը զարմանայ Պ. Պալատան թէ ինչպէս 3 տարի Օմիւռնիա կեցայ . և արդարեւ պէտք է զարմանայ որ այնքան ժամանակ ինձի դէմ լարած դադտնի որոգայթները ինչպէս ջաջողեցան : Եւ ինչո՞ւ ինձի դէմ հակակրութիւն ունեցեր է Պ. Պալատան , ահաւասիկ պատճառը , որուն շատ ուշ վերահասու եղած էի : Պ. Պալատան օգնական վարժապետ ընտրուած ատենը ըստ որում Ընդդէմս վարժապետ տկար , ծեր և հիւանդոտ (մերձ 'ի մահ երևակայուած) էր , ուստի կամ Պ. Պալատանին խօստմունք եղած պիտի ըլլայ , և կամ Պ. Պալատան ինքնին իւր միտքը դրած ըլլալու է վարժապետին տեղը չափազանց , որ երբ ես 'ի Օմիւռնիա դայի , և վարժապետ ընտրուեցայ , մեծ կասկած տուած եղայ իրեն , մի՛ դուպէ ես Պօլիսէն եկած ըլլամ մօրեղբօրս յաջորդ ընտրուիլ . և այս կասկածը փարատելու համար նոյն ինքն Պ. Պալատան մերձեցաւ առ Ընդ . վարժապետ* փորձել զնա , թէ « հարկ էր , վարժապետ , ձեր քեւորդին

* Ա. վարժապետ վերստին դպրոց մտնելէն վերջը , օրերով եւ գիշերներով կը նստէր ինձ պատ-

վերի սրահն ընդունել » . վարժապետն առանց
փորձողին խորամանկութիւնն իմանալու կը մեր-
ժէ ըսելով թէ « Բ. սրահը այնպիսի անձի մը
պէտք ունի, որ բարեկարգի » : Պարձեալ նոյն
ինքն Պ. Պալապան զպրոց նոր մտած ժամա-
նակս յաւաջադէմ աշակերտաց ոմանց կը դառ-
նայ կ'ըսէ թէ « Ը. վարժապետ իւր բեռոր-
դին բերել տալով և վարժապետ կարգելովը՝
իմ ստղիս ներքև խորհուրդի խորհուրդի (իւր բերնի
բառն է) դրաւ » . ըսել կ'ուզէ Պ. Պալապան
թէ վարժապետին միտքը կամաց կամաց զին-
քը ճամբել էր : Ըհաւաստիկ հոս է ինդիրը,
և Պ. Պալապանին կեղծ և սուտ խօսիլը յե-
րևան հանելու կէտը . — Պ. Պալապան Լրջին

մէլ բոլոր անցած գացածները, Պ. Պալապանին բա-
նեցուցած ներքը, (որոնց ինքն ալ վերջը վերա-
հասու ըլլալով, մեծ գգուշութիւն այնուհետեւ բա-
նեցրնել հարկ կը մնար իրեն), եւ թէ որչափ ջա-
րեաց պատճառ. եղած է Պ. Պալապան, որ վար-
ժապետին խօսեցածները գացեր հոգաբարձուաց ի-
մացուցեր է բարդութեամբ եւ ջափագանցութեամբ,
զի կը գարմանար վարժապետն անգամ հոգաբարձ-
ուաց ոմանց վերջին աստիճան ունեցած հակառակ-
ութեանը վէրայ, որոնք տակաւին տարի մ'առաջ
իւր հիւանդութեանը մեծամեծ ծառայութիւնները
բաժնէին իրեն : Իսկ հոգաբարձուաց ոմանց այն-
քան հակառակասիրութեանը՝ երկ ստուգիւ բոլոր-
ովին միմիայն Պ. Պալապան է եղած շարժա-
տիք . . . խիստ մեծ դատապարտութեան ներքեւ է
Պ. Պալապան . . . խղճմտանքին բող հարցրնէ.
մենք մեր խղճմտանքին վկայութիւնը յառաջ կը
բերենք, եւ ճշմարիտ է անոր վկայութիւնը :

մէջ կը հաստատէ թէ ինք և վարժապետ զեւրար անհամեմատ սիրով կը սիրէին . արդ կ'ընդունին վարժապետին սիրոյն անկեղծ ու թիւնը , անոր միամտութեանը վստահելով , որ ծանօթ է բոլոր Օմիււնացւոց . բայց կը հարցընեմ Պ . Պալապանին թէ ինք ինչո՞ւ տարակոյս և կասկած կը ցուցընէ վարժապետին վերայ , եւ թէ իւր սէրն ալ անկեղծ էր ... ըստ սրտի իւր կը դատէ զվարժապետը ... ուրեմն չկան իւր մեղրաշուրթն բանից հաւատալու չափ տրխմարներ . ինք դպրոց մտած ժամանակը միտքը դրեր է յաջորդել վարժապետին տեղը , և երբ վարժապետին հրաժարին ալ կուզայ կը հասնի , իւր նպատակին հասած ըլլալու կէտին վերայ ըլլալով՝ հարկ կը մնար անոր փեշեր վեճակի մէջ մտնել 'ի սկզբան , և յետոյ վարժապետին դէմ զինիլ յայտնի համարձակ . քիչ մը վերջը պիտի բացատրենք : Ըսածներէս յայտնի կ'երևայ որ Պ . Պալապան ինծի դէմ հակակրօութիւն ունեցեր է , և ոչ ես իրեն դէմ , ինչպէս ինք կը կեղծէ :

ՅՕԴՈՒԱԾ Է .

Պ . Պալապանին փոյրք .

Պ . Պալապան հանգիստ ըլլալու համար կը պարտաւորէր զիս դպրոցէն աքսորել . բայց իւր առջև բաւական մեծ արգելքներ կ'եղնէին , հարկ կը մնար խորամանկութեան ղիմել : Վարժապետին դպրոցէն հրաժարիլովը ինքը որչափ որ օգուտ կը բաղէր , բայց զարձեակ

ինձմէ երկիւղ կը կրէր . . . : Պ. Պալապան երբ տեսաւ որ վարժապետին հրաժարած օրերը դեռ անտարբէր կը մնամ . և ինք ըստ որում միտքը դրած էր ամենեւին չհրաժարիլ , (տես Նշե տետրակին 36դ . երեսը) , այլ այն պարագաներուն մէջ միայն առ երեսս վարժապետին կուսակցութիւն ցուցընէլ , և անոր հրաժարման վերայ քանի մը կաթիլ կեղծ արտասուք թափել , մօտեցաւ զիս . փորձելու , թէ կ'ուզե՞մ հրաժարիլ : Ես դեռ ամիս մը չը կար որ վարժարանը մտած էի , և միայն 1—2 ամիս մնալու համար խօսք տուած ըլլալովս հարկ կը մնար ինձ խոհեմութիւն բանեցընէլ , որ բոլորովին խզմիւրէն հրաժարիմ : Բայց ով կրնար կարծել թէ իրերն այն աստիճան դէշնան . միայն Պ . Պալապան գիտնալով հետեանքը , Ն . վարժապետը համոզելու ձեռք առած միջոցներուն մէջ զիս ալ դպրոցէն նետել կը ջանար միանգամայն , զի փախչելան տերտերը ջնջուի դպրոցէն , որ հանգիստ ըլլայ Պ . Պալապանի ուրիշը , և ինքն իւր ախարը հասարակութիւն : Պ . Պալապան սրտին նեղութենէն յառաջ կը բերէ նաև սուտ յօդուած մը (Նշե երես 35) , և 'ի հաստատութիւն նորա այսպէս եզրակացութիւն կ'ընէ , « անկարելի է ուրանալը , որովհետև անկարելի է ան ատենուան դպրոցէն չհրաժարիլն ուրանալը » . դիւրին է հետեւցընելը , « որովհետև չհրաժարեցայ դպրոցէն , ուստի անշուշտ և անշուշտ այն խօսքերն ըսած պիտի ըլլամ » . ո՞վ ուզե՞ր դատողութեան . . .

Թող ներէ Պ. Պալապան, և ցուցընէ մեզ Թէ իւր արհաւիրանքն ո՞ր երեսը զրուած են այս օրինակ ուղիղ եղբակացութիւններ... Հետեւութիւնն ինքնին կ'ապացուցանէ այն ըսուածքին սուտ և կեղծ ըլլալը :

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Պ. Պալապանին Բ. սուտը.

Պ. Պալապան'ի զուր ջանացեր է այն վերջին դէպքին պատճառ տաճկերէն լեզուի դասատուին փոփոխութիւնը ըլլալը ! Հերքելու . զի ամենուն ծանօթ դէպք մ'է այս, և մանաւանդ նոյնը կը հաստատէ այն պարսաւատետրը, (որուն հեղինակն ինքն է, զոր պիտի հաստատեմք քիչ մը ետքը, Թէ և ինք Պ. Պալապան արին քրտինք Թափած ըլլայ հերքել իւր հեղինակութիւնն ըլլալը 1, 2 3 4 2 4. երեսին մէջ) յօդուած Յին մէջ Թէ “ այս փոփոխութեանց մէջ նշանաւոր է տաճկերէն դասատուին փոփոխութիւնը, ըստ ամենայնի դպրոցին օգտակար ըլլալովը, բայց և ցաւելով կ'ըսեմք՝ անով վայրապար գայթակղութիւններ ծագեցան ” և այլն . Թող կարդայ, Պ. Պալապան իւր բովը պահած այն ողջ մնացած տետրակին մէկ օրինակը . մենք սուրեր և աղեղներ չենք գործածեր անոր խղճ մտանաց զգայունութիւն տալու համար... :

ՅՕԴՈՒԱԾ Թ.

Պ. Պալապանին Գ. մեծ է. անկերէի սուտը.

Պ. Պալապան մեծ ճիգն Թափեր է ինք.

զինքը հաւատարիմ ձեւացնելու վարժապետին .
բայց մենք հաստատենք հիմա համառօտիւ , թէ
ինք որքան եպերելի ընթացք ունեցաւ վար-
ժապետին դէմ , անոր դպրոցէն հրաժարած մի-
ջոցին մէջ :

Ը. — Պ. Պալապան իւր Եջին Կէդ երեսին
մէջ կանխաւ կը գուշակէ թէ զինքը ձեռագիր
տետրակի մը հեղինակ ըլլալու դատապարտու-
թեանը ներքե պիտի ձգենք . ուստի յամենայն
զօրութենէ կեղծ փաստեր յառաջ կը բերէ , և
զինքը անմեղ հանել կը ջանայ : Բսելէ ինքն
ալ կ'ըզպայ ո'րքան դատապարտել' գրուածք
մ'է ան , որուն մէջ անյուր և անխիղճ նա-
խատական բառեր կան ընդդէմ բազմամեայ և
բազմերախտ ուսուցչի մը : Խորշիւ կ'ուզէ Պ.
Պալապան այն անարգանքէն , և յանցանքը կեր-
պով մը հոգաբարձուաց վերայ կը ձգէ . հաս-
տատենք հիմայ ուրեմն թէ հեղինակը Պ. Պա-
լապանն է : Դպրոցին Թանգարան ըսուած սենե-
կին մէջ (վարժապետին հրաժարուիլէն վերջը)
Պ. Պալապանեան հեղինակ կ'ըլլար այն գրուա-
ծոյն , հոգաբարձուաց մէկն ալ իրեն խորհրդ-
դական ունենալով : Պ. Պալապանին և խորհրդ-
դական հոգաբարձուին ժամերով նոյն սենե-
ակը խորհրդակցութեան մտնելը , և Պ. Պա-
լապանին ալ օրերով գրութեան զբաղելը դի-
տեմ ես և տեսած եմ , դիտեն և տեսած են վար-
ժապետները և աշակերտները : Թանգարանէն
դուրս ելած ժամանակը զգուշութեամբ դուռը

կը գոցէր, օտար մէկը չէր մտնէր սենեակը :
Ընգամ մը հետաքրքրութենէս շարժած գրասե-
ղանին վերայ գրուած և ծրարուած թուղթերը
սկսայ խառնել, Պ. Պալապան դող ելնելովնե-
րողութիւն խնդրեց որ չխառնեմ : Ե, յս հետա-
քրքրութիւնս քիչ ժամանակէն յագեցուցի՞, զի
խմացայ բարեկամիս մէկէն, որ վարժապետին
հաւատարիմ և ամենասիրելի աշակերտներէն էր,
թէ « այն գրուածը վարժապետին դէմ սոսկա-
լի և անխիղճ գրուած մ'է, Պ. Պալապանին
ձեռագիրը, դեռ մէկ օրինակ գրուած . ուղե-
ցին որ ես ալ հատ մը օրինակեմ, բայց հա-
զիւ երես մը օրինակեր էի, երբ վախճանը քըն-
նեցի իմացայ . . . խիղճս տանջեց զիս և մեր-
ժեցի գրելը » : Չեմ մոռնար յիշել այն սպառ-
նալիքը, որ կ'ընէր ինձ Պ. Պալապան վարժա-
պետին հրաժարուիլէն 3 օր ետքը Եւագերկու-
շաբթի կէս օրէն վերջը Բ. սրահին Բ. դասա-
րանին մէջ, թէ « մէյմը գրիչը ձեռքս առնեմ,
երկու տող բան գրելու ելնեմ, տես ինչեր պի-
տի գրեմ », այս սպառնալիքը լսած ըլլալովս
անշուշտ հետաքրքրութիւն կ'ունենայի, թէ ինչ
էր Պ. Պալապանին թանգարան սենեակը քաջուած
երբեմն առանձնութեամբ և երբեմն խորհրդ-
դակցութեամբ գրածը . . . վերջապէս իմացայ,
և օրինակել իսկ փութացի նոյն տետրակը, որ
վարժապետին մահուանէն վերջը սկսաւ տա-
րածիլ ժողովրդեան մէջ : Գիտիլ արժան է որ
մինչդեռ վարժապետը կենդանի էր, ոչ ոք կա-

բողէր այնպիսի անճոռնի գրուած մը զուրս
հանել . իսկ երբ չարը պարսպ գտաւ ասպա-
րէզն իւր ախոյեանէն , ան ատեն գլուխ վերցը-
նել սկսեց . բայց հանգուցեալ բազմարդիւն
վարժապետին ոգին կենդանի ըլլալով իւր երախ-
տապարտ սանունց սրտին մէջ , դատախազ կե-
ցած են անոնք , որոնցմէ մէկը նոյն անճոռնի
տետրակին համառօտ պատասխան մը յարած է ,
որ միատեղ հասարակութեան ձեռքը կը շրջի
'ի Չժիւռնիս : Դարձեալ եթէ կրնայ , թող
ուրանայ Պ. Պալապան թէ չէ եղած ինք հեղի-
նակ այնպիսի գրուածի մը . կարծեր է թէ ան-
կէ նոր փաստեր պիտի հանենք . — շատ խոր
հրդածութիւններու նիւթ կ'ունենայինք , եթէ
անձնակա՞ն պատուոյ դպչելու միտք ունենայինք ,
և մանաւանդ ժամանակնիս չխնայէինք :

Բ. — Կրնա՞յ ուրանայ Պ. Պալապան որ վար-
ժապետին հրատարուիլէն 2-3 օր ետքը՝ դեռ ան-
որ համար թափած բանի մը կեղծ արտասուք-
ները իւր երեսէն չջնջած , կըսէր դպրոցին մէջ
պարծենալով մը , « վարժապետը կոտորեց , թա-
փեց , կործանեց , ես եղայ շինող , նորոգող և
կանգնող » : Հատերը լսեցին այս խօսքերը :

Գ. — Կրնա՞յ ուրանայ Պ. Պալապան որ կըսէր
պարծենալով , և ըսել կուտար իւր համախոհ-
ներուն թէ « վարժապետին մէկ տարուան մէջ
չտեսած գործը ինք (Պ. Պալապան) 2 ամսոյ
մէջ տեսեր , և հրաշալի յաւաստագիտութիւն տուեր

է դպրոցին* :

Դ. — Կրնա՞յ ուրանալ Պ. Պալապան աշակերտաց առջև ցուցըցած անվայել ընթացքը ընդդէմ վարժապետին և անոր կուսակից աշակերտաց ունանց :

Ե. — Կրնա՞յ ուրանալ Պ. Պալապան, որ կ'աղաչէր կը պաղատէր հողաբարձուաց որ քննութենէն յառաջ չբերուի վարժապետն 'ի դպրոց, որ չըլլայ թէ ինք խայտառակուի, այլ գէթ քննութենէն վերջը թողուի : Կը մտածէ՞ր արդեօք Պ. Պալապան իւր բազմերախտ վարժապետը, որ ամեն օր կը հալէր կը մաշէր . . . :

Չ. — Կրնա՞յ ուրանալ Պ. Պալապան որ 'ի նախատինս վարժապետին կ'ըսէր « ես վարժապետէն բան մը չեմ սորված » . . . :

Լ. — Կրնա՞յ ուրանալ Պ. Պալապան որ վարժապետին վերստին դպրոց բերուած օրը ինչ անվայել կերպով յանդուզն շարժուածք մ'ունեցաւ վարժապետին դէմ (անոր սիրտը վիրաւորելու համար անշուշտ) 'ի ներկայու-

*Նոյն տարւոյն քննութեան՝ ձանձրացուցիչ էս պարգեաբաշխութեան՝ տղայական հանգէս ըսած ըլլալովս Կենսագրութեան մէջ, Պ. Պալապանին սիրտը վըշտացուցեր էմ. երբ ստոյգը խօսիմ մի ըստ միոջե Պ. Պալապանին անձնական պատուոյն դպչէյ հարկ կըլլայ. ուստի միայն Պ. Պալապանին յիշեցընէյ կուգեմ պարգեաբաշխութեան օրը նոյն իսկ իւր բարեկամաց բերնէն հերեք է, վերջուր ուրիշ բան մը ճայնէրր . . . :

Թեան Արժանապատիւ Տէր Մարգար Հօր * . . . :

Ը. — Կրնա՞յ ուրանալ Պ. Պալապան որ վարժապետին վերստին դպրոց բերուելէն վերջը ասդիս անդին կը տարածայնէր թէ « վարժապետը դաս տալու համար չբերուեցաւ, այլ միայն կառավարչուԹեան պաշտօն վարելու. և ինքն է դասատու և այլն » : Տարակոյս չունիմք որ Պ. Պալապան սրտին զայրոյթն իջեցնելու, և վարժապետին դէմ ունեցած ռին ատնելու դիտամբ զրգւած է զհոգաբարձուս որ դասատուուԹեան պաշտօն վարելու արտօնուԹիւն չտան վարժապետին** . . . ո՛վ ապերախտուԹեա

* Եշտին մեջ կ'ըսէ Պ. Պալապան քէ ամենեւին վարժապետին տեղը փոխանակելու փափաք մը չէ ունեցած. տիւմար մը գուցէ հաւատայ. բայց մենք ադէկ գիտենք որ Տէր Մարգար Հայրը երբ Մերս. դպրոցը առաջին վարժապետ հայկաբանութեան բերուեցաւ, (ինչպէս մինչէս ցարդ կը վարէ նոյն պաշտօնը. Է. Պ. Պալապան անոր օգնական դասատու է). Պ. Պալապանին եղջիւրները խորտակեցան. զի կը յուսար որ աղջկանց համար 'ի Պօլսոյ յատկապէս բերուած պատուանոր վարժապետ մը՝ քահանայ մեռնադրուելէն (նոյն օրերը քառասնօրեայ պարտուց մեջ էր) վերջն ալ անշուշտ դարձեալ աղջկանց դպրոցը կը դրուի, Է. Մերս. վարժարանը իրեն ժառանգ կը մնայ. — բայց իրաւունք ունէր Պ. Պալապան զարմանայու, զի չէր կարծէր որ հոգաբարձութիւն վերայ անվստահ, Է. դպրոցը կառավարելու անկարող համարած ըլլան զինքը . . . :

** Պ. Պալապան բողվարժապետին հիւանդութիւնը պատճառ չբռնէ, զի վարժապետը կը փա-

նրն . դեռ ևս անամօթաբար երախտապարտ
աշակերտ եմ կ'ըսէ Նշմի մէջ , և չյի-
շեր այս իւր ապօրինաւոր ընթացքը . . . բազ-
մամեայ վարժապետ մը վերջին աստիճան
յանարգութիւն իջեցընել , և անոր ծառայան
տեսչութեան պաշտօն տալ , (ինչպէս կ'ըսէ
ցաւօք Լ . վարժապետ իւր յիշատակարանին
մէջ , տես Կենսագրութեան երես 30) , և ինք Պ .
Պալապան (Լ . վարժապետին աշակերտը) իբ-
րև չնաշխարհիկ դասատու դպրոցին՝ առաջիա-
շակերտաց , այցելուաց և այլն և այլն պար-
ծիլ . . . : Միթէ չէր կրնար Պ . Պալապան մեր-
ժեւ չընդունել հոգաբարձուաց (եթէ անոնց
կողմանէ առաջարկուած է . . .) առաջարկու-
թիւնը , ըսելով թէ « չեմ կրնար այդ ձեր ա-
ռաջարկութիւնը ընդունել , և յայտնապէս վի-
րաւորել իմ վարժապետիս սիրտը , որ 25 տա-
րիէ հետէ այս վարժարանին կառավարն էր ,
և անոր յառաջադիմութեանը և բարի համբա-
ւոյն սկզբնապատճառ և այլն և այլն » . չըսաւ ,
և ի'նչու . . . Թող Պ . Պալապան մեզի բացատ-
րէ ուրիշ Նշմի մը , և դարձեալ ջանայ երեսը
դիմակով՝ ինքզինքը վարժապետին հաւատա-
րիմը չեցընել . . . :

Մինչև ցարդ ըսածներս վարժապետը սիրե-

փաքեր դաս տալ , քէն մահուան դուռն քլար-
ինչպէս որ մահուանէն 10 օր յառաջ դաս տա-
լու արտօնութիւն ստացած էր նորընտիր հոգա-
բարձուներէն (տես Կենսագրութեան երես 32) :

լու և անոր հաւատարիմ մնալու ցոյցք են . . .
ընթերցողաց կը յանձնեմ այս բնութիւնը , և
կը հրաւիրեմք Պ . Պալապանը , որ յետս կոչէ
Եղիշ մէջ կեղծ դրուածները — վարժապետն երբեք
անհասարարի՞մ չգործուիլ և այլն և այլն :

ՅՕԴՈՒԱԾ Ժ .

Պ . Պալապանին տարակոյսը :

Կենսագրութեան մէջ դրուած յիշատակա-
րաններուն ստուգութեանը վերայ Պ . Պալա-
պան տարակոյս ցուցնելով , խաւարային նե-
տիւք կ'ուզէ տղայական փաստերով զվարժա-
պետը դատապարտութեան* ներքեւ ձգել , վա-
սըն զի ինք կարող է ճանաչել նոյն գրաբառ
դրուած յիշատակարաններուն լեզուէն և ասաց-
ուածքէն , որ վարժապետին բուն իւր ձեռա-
գիրներն են , զորս ցուցըցած եմ Իզմիր եղած
ժամանակս իմ ոգեկից բարեկամներուս : Տա-
րակոյս կը ցուցնէ , զուցէ անհաւատալի կը
թուի իրեն սա յիշատակարանը “ ՚ի 16 յունիսի
՚ի շուկայն ասաց ինչէ՞ր լու իլու . . . ըտտ որում
Կոստանդեանն պաշտպան եկաց քեզ , գան ըմ-
պելոց ես սատտիկ յոյժ . — ո՞վ Բ-րիստոնեայ ա-
րանցս ” : Նոյն անձն էր Պ . Պալապանի խոր-
հրդականը , և անոր չ լըրա ամսական խոստա-
ցողը , եթէ Պ . Պալապան հաճի ընդդէմ վար-
ժապետին գործածել իւր խորամանկ սիրտն

* Պ . Պալապան Իտալերէն առակ մը յառաջ
բերելով կ'ուզէ րսել թէ վարժապետին կենսագ-
րութեան մէջ ամենեւին պետք չէր այն վերջին

ու գրիչը : — Պ . Պալապան իւր անունը կը
 փնտռէ յիշատակարաններուն մէջ . եթէ ար-
 դարեւ ապահով ըլլայի , որ Պ . Պալապան՝ վար-
 ժապետին իրեն դէմ վշտացած ըլլալը գիտնա-
 լով , 'ի զեղջ և յապաշաւ պիտի դիմէ , կը
 հրաւիրէի զինքը որ ուշադրութեամբ կարդայ
 մեր ՃԻ . յօդուածը , և մանաւանդ երթայ վար-
 ժապետին լծակից տիկնոջը խոնարհութեամբ
 հարցնէ և տեղեկանայ . և ապա փութայ ա-
 պաշաւել , եթէ հանդերձեալ աշխարհի մը կը
 հաւատայ . . . :

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ .

Պ . Պալապանին սրտնեղութիւնը .

Իւր քերթուածներուն անպիտանութիւնը
 (ինք կ'ըսէ) ցուցնելու համար Պ . Պալա-
 պանին սիրտը նեղացած ըլլալով , ելեր Լոթի
 մէջ աշխատութիւն յանձն առեր է ինծի դէմ
 ստայօղ պատմութիւններ յօրինելու . բայց թող
 ներէ Պ . Պալապան . . . եթէ իւր քերթուածոց

դէպքին ստոյգ պատմութիւնը յառաջ բերել . քե
 եւ մէկ մեծ անիրաւութիւն մ'ըլլայը՝ ինքն այ կը
 խոստովանի Խոպերէն առակին հաստատութեա-
 նը մէջ . — բայց մենք այս տեսակ գաղափարներ
 ունեցող անձի պատասխան անգամ տայ ջէնք ու-
 գեր, զի եթէ պատմագիրք այս գաղափարն ունե-
 ցած ըլլան, անատեն աշխարհի վերայ ստոյգ պատ-
 մութիւն մ'ամենեւին ջպիտի տեսնուէր . Վասակնե-
 րու , Մերութաններու եւ Վեստ Սարգսի պէս ան-
 ձերս . անօրէնութիւնները ծածկուած պիտի պահ-
 աւին . . . :

հաւաքածոյ տպագրութիւնն 'ի յոյս ընծայէ, ան
ատեն մէկ մեծ գովութիւն մը կուտամ իրեն . . . :

ՅՕԴՈՒԱԾ ԺԲ.

Պ. Պալապանին խրատը.

Պ. Պալապան կը խրատէ զիս որ մէկըն
դնեմ հրատոջոր բնաւորութիւնս, որպէս զի
եղած տեղս մնալու կարող ըլլամ . . . ըսել
կ'ուզէ, « կենացդ մէջ ճշմարտութիւն մի խօ-
սիր, եթէ խաղաղ ապրիլ կ'ուզես », ինչ-
պէս որ ինք կ'ընէ* . . . « կեղծաւորութիւն ը-
րէ, Ազգիդ ընդհանրութեան օգուտը 'ի շնորհս
մասնաւոր անձանց զոհէ », և այլն . — շնոր-
հակալ եմ Պ. Պալապանէն, թող գիտնայ որ
իմ սկզբունքս շատ տարբեր է իւր սկզբունք-
ներէն. շողքորթութիւն չեմ ուզեր սիրել, Գ
ապրուստի և անցաւոր պատուոյ բաղձալու նը-

* Բարեկամիս մէկը կը հաստատէ քէ Պ. Պա-
լապանի բերեկն ախանօովը լսեր է որ կ'ըսէ « Ես
Ազգային սնտուկը 60,000 դուրուշ դրամագլուխ ու-
նեցածի պէս կը սեպեմ, եւ 100ին 10ով տարին
6,000 դուրուշ անկէ շահ կ'առնեմ » . . . մենք
ջէինք ուզեր այս խօսքը փոխադրել, անճնակա-
նի դպչել ջուգելով. բայց մասնաւորի օգուտը
խորհելով, ընդհանրութեան մը օգուտը գոհելու
վատութենէն փախչի ուզելով, մենք այն մատաղ
եւ անմեղ գաւազաց այսպիսի . . . սրտով դաս-
տիարակ մ'ուրենեցանուն համար դատախազ կե-
նայու իրաւունքն ունինք, քանի որ մեր ինքնա-
մաշ ազգին անդամ ըլլալու պատիւն ունինք, ու-
րեմն կրնանք ստիպել զՊալապանը որ, կամ սիրտը
փոխէ, կամ պաշտօնը . . . :

պատակ չունիմ. Բղգիս ու Հայրենեացս օգու-
տը խորհելու, պարտական եմ և ոչ մասնաւոր-
ներու... ուր որ ըլլայ բիչ մը հաց կը շնոր-
հէ ինձ հէրր : Եւ յս է իմ աւազադրութիւնս՝
տիրոջը շնորհաց վստահացած . — Պ . Պալապան
ինչ ելեր է տղայական յորդորներ կուտայ ինձ :

ՅՕԴՈՒԱԾ ԺԴ.

Պ. Պալապանին ցնորքը.

Կը յորդորէ զիս որ « օտար բազկաց չգի-
մեմ, երբ դժբաղդութիւն մը պատահելու ըլ-
լայ » . շատ մուժ խօսեր է Պ . Պալապան .
կարծեր է թէ այնքան կը սիրեմ « քեզ », որ դըժ-
բաղդութեան մէջ օտար աղգի դիմել կը հար-
կադրուիմ, ըստ տաճկական աւակին՝ զիս իւր
սրտին պէս կը դատէ զուցէ . — իսկ եթէ ճըշ-
մարտութիւն սիրելուս կամ խօսելուս համար
դժբաղդութեան ենթակայ պիտի ըլլամ, այդ
ինձ փառք պիտի սեպեմ, զի ես կը վախնամ
էր ըսուիլէ . . . :

ՅՕԴՈՒԱԾ ԺԵ.

Պ. Պալապանին անգեղջ մնալը.


Չուզեր հասկընալ Պ . Պալապան իւր ան-
ղեղջ մնալը, որ յառաջ բերած եմ կենսադը-
րութեան մէջ . բայց մենք հիմա պարզենք մեր
ըսածը . որ զիտնայ Պ . Պալապան թէ վար-
ժապետը վերջին աստիճան իւր յամաւուրութեանը
մերայ ցաւած էր : Եւ յին 1856 տարւոյն սուրբ
Բստուածածնի վերափոխման շաբաթ օրը

(վարժապետը արդէն մտած էր 'ի դպրոց) ,
Պ. Պալապան պատրաստուեցաւ աշակերտաց
հետ սուրբ Հաղորդութիւն առնուլ . նոյն մի-
ջոցին Ենդրէաս վարժապետ դուրսը դաւիթը
կեցած կ'ազօթէր : Ընշուշտ Պ. Պալապան
վերջին դէպքին մէջ իւր ցուցըցած ընթացքը
և գործքը (գորս վերը համառօտիւ յայտնե-
ցինք , և անոնց ճշմարիտ ըլլալուն իւր խրղճ-
մբտանքն իսկ կը վկայէ . . .) նոյն սարսափելի
կէտին մէջ յիշելով կը քստմնէր , և խղճմտան-
քըն ալ զինքը կը տանջէր . ուստի եկաւ Պ .
Պալապան , և ներկայացաւ վարժապետին սա-
խօսքերով , որ ճիշտ բուն իւր բերնին բառե-
րն են , վարժապետ , կերնա՞հր , աղօթ՜ բե՜հ , (ո՞ր
կ'երթայ . . . ի՞նչ կըխնդրէ . . . և ի՞նչ բանի
համար . . .) անտարակոյս այս արօրինակ զըման
վերայ Ն . վարժապետ այլ յայլմէ եղած պէ-
տի պատասխանէ , « տայէ քեզ տէր ըստ սրտի
քում » : — Վախցաւ Պ . Պալապան եւ՝ « Եւ Բ-
ւոյ ըսելու , որ զուցէ իւր յանցաւոր ըլլալը խոս-
տովանած կ'ըլլայ վարժապետին , և վարժապե-
տըն ալ ընդհանրութեան կը ծանուցանէ թէ
Պ . Պալապան ճանչցաւ իւր յանցանքը , և զըղ-
ջաց . . . » : Նոյն օրը վարժապետին տունն էի . ուր
վարժապետին բերնէն իմացայ Պ . Պալապանին
բերնէն ելած բառերը : Ինչ պէտք էր ընել
վարժապետը . — դող ելած ըլլալով սկսաւ
իւր տկարութիւնը սաստկանալ . չէինք կըր-
նար մխիթարել զվարժապետը , որ յորդ ար-

տասուք կը թափէր Պ. Պալապանին անլուր յա-
մառութեանը և ընդդէմ մարդկուրթեան և ընդ-
դէմ Քրիստոնէութեան գործած անվայել ըն-
թացից վերայ . զի վարժապետը տեղն 'ի տեղը
վերահասու եղած էր Պ. Պալապանին մատ-
նութեան և անհաւատարմութեան և այնքան
չարեաց պատճառ ըլլալուն վերայ . բայց վար-
ժապետը բարեսիրտ ըլլալով և Քրիստոնէա-
կան սիրոյ պարտք մը կատարել ուզելով կ'ըս-
պասէր որ Պ. Պալապան ինքնին զգայ իւր
յանցանքը և 'ի դեղջ գայ : Չըրաւ Պ. Պա-
լապան , և վարժապետն ալ նոյն ցաւօք իջաւ
'ի գերեզման :


Ըսածներուս ստուգութեանը կրնայ տեղե-
կանալ Պ. Պալապանին վարժապետին լծակից
տիկինէն , որ իզմիր կը բնակի . և կը հրաւի-
րեմ Պ. Պալապանը որ խոճհամբի գոմարը Լեւ-
նաւով երթայ շուրջ , և հանգուցեալ բազմե-
րախտ վարժապետին ցուրտդամբանին շուրջը
օրերով արդարեւ թափէ , որ վշտացած իրմէ՞
զացած յաւիտենականութեան եզրը կը հանգ-
չի հիմայ : Եւ յայտն կը վայլէ Պ. Պալապանին ,
այսպէս կը վայլէ խօսող և գրող խաչելոյն Յի-
սուսի աշակերտ եղող անձի մը , որ գործով ալ
յայտնէ . — հանգուցեալը կը լռէ , մենք ալ
կը լռենք , թող Պ. Պալապանին խոճհամբ
խօսի : —

3 Յուլիս 1859 ԱՏԵՓԱՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ
ի Պօլիս





2013

A decorative border with ornate scrollwork and floral motifs surrounds the page. In the center, a circular frame with a floral wreath contains the year 1859.

1859